«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Հայտորոշիչ թեստը մնացորդային գիտելիքների ստուգում իրականացնելու համար

ԱՌԱՐԿԱ

Մայրենի,Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը

ՀԵՂԻՆԱԿ

Նունուֆար Ղանդիլյան

ՄԱՐԶ

Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Գեղարոտի միջնակարգ դպրոց

ՆԱԽԱԲԱՆ

Աշխատանքը արդյունավետ է լինում, երբ վերահսկողությունը կատարվում է ժամանակին և պարբերաբար, իսկ վերահսկողությունը համարվում է ուսուցման գործընթացի կարևոր փուլերից մեկը։

Ընտրել եմ այս թեման և կատարում եմ հետազոտություն։

Եթե գիտելիքների որակի ստուգումն ու գնահատումը կատարվի ճիշտ, ապա ցանկացած ուսումնադաստիարակչական գործընթաց արդյունավետ կլինի։

Ինչ է թեստը։ Այն խնամքով ընտրված հարցերի շարք է, որը տրվում է աշակերտներին միավորներով գնահատելու կամ ուսուցումը խթանելու, արժևորելու նպատակով։

Թեստորն կրթական համակարգում օգտագործվում են ընդունելության քննությունների, գիտելիքների ընթացիկ ստուգման, հեռաուսուցման և քննությունների անցկացման գործընթացում։

Երբ կազմում ենք թեստեր, հաշվի ենք առնում ճանաչողական չորս մակարդակները։

Առաջին մակարդակում ընկալում են ինֆորմացիան, ծանոթանում են առարկային։

Երկրորդ մակարդակում ինֆորմացիայի ընկալումից բացի կարողանում են տալ նրա մեխանիկական արտապատկերումը, որը նպատակ ունի փոխանցել ստացված ինֆորմացիան, վերարտադրել։

Երրորդ մակարդակում կարողանում են ինֆորմացիան ընկալել, վերլուծել, գիտակցել և դրանց հիման վրա ընդունել։

Այս դեպքում ստացված գիտելիքները պետք է կարողանան կիրառել տարբեր իրավիճակներում։

Չորրորդ մակարդակում ստացված գիտելիքները ոչ միայն կիրառում են, այլև ստեղծում են նորերը։Այսինքն, նպատակը ստեղծված նոր գիտելիքների վերարտադրումն է։

Միշտ չէ, որ թեստերի աճող կիրառումը ուղեկցվում է դրանց արդյունքներն օգտագործելու վերաբերյալ ճիշտ և հստակ պատկերացմամբ։

Թեստերի միջոցով ուսուցիչը պետք է իմանա սովորողի մասին, նա ինչ կարող է և ինչ չի կարող։ Պարտադիր է իմանալ, թե ինչն է հնարավոր և ինչը հնարավոր չէ գնահատել թեստերի միջոցով, ինչպես են թեստերը կառուցված, որքանով են ճիշտ

կիրառվել։Այն թեստը, որը լավ է կազմված, ոչ միայն հնարավորություն է տալիս գնահատել աշխատանքը,այլ նաև տեղեկություններ է հաղորդում։

Թեստերը համարվում են ուժեղ գործիքմեր, երբ անհրաժեշտ է ստեղծել տարբեր պայմաններ(երբ ուժեղ երեխաներին թույլ է տրվում ավելի բարդ թեմաներ ուսումնասիրել)։

Ուսումնական ամբողջ գործընթացի վրա թեստերն ազդում են։Եվ այդ ազդեցությունը կոչվում է հակադարձ ազդեցություն, որն էլ իր հերթին լինում է դրական և բացասական։ Դրական ազդեցությունը ուսուցման վրա գլխավորապես պայմանավորված է ստուգվող նյութի ընտրությամբ։Թեստի ազդեցությունը համարվում է դրական, եթե այն ընդգրկուն է և արտացոլում է իսկապես ուսուցանված և սովորողների կողմից ընկալված նյութերը։

Իսկ եթե թեստը բացասաբար է անրադառնում ուսուցման վրա, ապա ազդեցությունը բացասական է։

Նպատակը–Որոշել սովորողների գիտելիքներն ու հմտությունները ,ուսուցման մեթոդներն ու արդյունքները։

ՈՒսուցիչը և աշակերտը հետադարձ կապի ապահովման միջոցով բարելավում են իրենց գործունեության ոլորտը։

Խնդիրները–ՈՒսուցիչը թեստի միջոցով որոշում է աշակերտի ուժեղ և թույլ կողմերը,բացթողումները։Այնուհետև մշակվում է դրանց վերացման ուղիները։

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Բազմաթիվ հետազոտություններ են կատարվում մանկավարժական թեստերի ստեղծման ուղղությամբ, որոնք նպատակաուղղված են թեստավորման գործընթացի ավտոմատացմանը, նրա ճշտության բարձրացման հարցերին։

Թեստերը սովորողի գիտելիքները ու հմտությունները ստուգելու և գնահատելու միջոց են,որոնք կիրառվում են ուսուցված նյութի յուրացման և իմացության ,ինչպես նաև որոշակի կարուղությունների ձևավորման սահմանը ստուգելու համար։

Թեստը կազմելիս հաշվի է առնվում այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է։ Եթե չկա նպատակ, ապա այն ուղղակի առաջադրանքների անհասկանալի մի համախումբ է։ Ըստ նպատակադրման թեստերը կարող են լինել՝

- Առաջադիմության,որոնք հանձնարարվում են նյութի ամփոփման ժամանակ յուրաքանչյուր կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին։
- Հայտորոշիչ թեստեր, որոնք պարբերաբար տրվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու և հետագայում ուսուցման որակը բարելավելու նպատակով։
- Ուսուցողական կամ ձևավորող թեստեր, որոնք օժանդակում են գիտելիքների ձեռքբերմանը, գործնական կիրառությանը, ընդհանրապես մտածողության զարգացմանը։
- Ընդհանուր գիտելիքների,կարողությունների ստուգման թեստեր, որոնք կարող են ներառել ուսումնական ծրագրերի մի քանի տարվա նյութ (նախատեսված է դպրոցի ավարտական և բուհական ընդունելության համար)։

Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստը կազմվում է նախապես ստեղծված բնութագրիչների հիման վրա հատուկ ընտրված խմբի կողմից հետազոտությունների, ընտրություն կատարելու,վկայական տալու նպատակով, իսկ ընթացիկ գնահատման թեստը ուսուցիչների կամ կենտրոնի կողմից և միտված է դասավանդման որակի բարելավմանը։

Թեստերը պարունակում են վարժությունների և առաջադրանքների հետևյալ տեսակները՝

ա. բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ

բ.կարճ պատասխաններ պահանջող հարցադրումներ

գ ստեղծագործական բնույթի կամ ընդարձակ պատասխան պահանջող հարցադրումներ

դ.համապատասխանեցման առաջադրանքներ

ե.բազմակի ընտրությամբ հարցեր(3, 4 կամ տարբերակ, որից մեկն է ճիշտ)։

Թեստային առաջադրանքները կարող են լինել հարցական, հաստատողական, տեքստային, աղյուսակային, գրաֆիկական և այլն։

Թեստային առաջադրանքի ձևի ընտրությունը կախված է ուսումնական առարկայից, թեստի նշանակումից (գիտելիքի ընթացիկ ստուգման, հայտորոշիչ, ավարտական)։

Ըստ սովորողի կողմից կատարվող գործողությունների բովանդակության առաջադրանքները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- .մեկ պատասխանի ընտրություն
- մի քանի պատասխանի ընտրություն
- երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատման
- առաջարկվող տարրերի շարքում ճիշտ հերթականության հաստատման
- առաջարկվող տարրերի նպատակային դասավորման
- բացթողումների լրացման
- տեղադրման
- պատասխանը կազմելու
- պատասխանը հաշվելու

Թեստերի առաջադրանքները պետք է ապահովեն սովորողների գնահատման օբյեկտիվությունը, հուսալիությունը։

Թեստային պահանջները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

- 《Առարկայական մաքրություն》(առաջադրանքը պետք է պարունակի միայն տվյալ ուսումնական առարկային վերաբերվող հարցեր)
- բովանդակության տրամաբանական ճշտություն

- արդյունավետություն

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Թեստային առաջադրանքները գնահատվում են կոնկրետությամբ, ընդհանրացման խորությամբ և գիտելիքների լրիվությամբ: Առաջադրանքը պետք է լինի հասկանալի, միարժեք և հնարավորինս կարճ: Առանց փորձնական ստուգման առաջադրանքը չի կարող լինել թեստային: Առաջադրանքի դժվարությունը հիմնականում կախված է նրա բովանդակությունից և ձևից: Առաջադրանքի բարդությունը կարելի որոշել սխալ պատասխանների մասով (սխալ պատասխանների հարաբերությունը պատասխանների ընդհանուր թվին):

Թեստային առաջադրանքներում կարող են լինել տարբեր քանակությամբ և հարաբերությամբ ճիշտ և սխալ պատասխաններ: Խորհուրդ չի տրվում բերել բացահայտ ոչ ճիշտ պատասխաներ, որոնք սովորողը միանգամից կճանաչի: Պատասխանների ոչ ճիշտ տարբերակները պետք է լինեն ճշմարտանման: Լավագույն է համարվում մեկ տող զբաղեցնող կարճ պատասխանը: Առաջադրանքում բառերի տողադարձ խորհուրդ չի տրվում (դա դժվարեցնում է կարդալը): Թեստային առաջադրանքներին ներկայացնող պահանջներից մեկը պատասխանի համար անհրաժեշտ ինֆորմացիայի նվազագույն ծավալն է առանց իմաստի կորստի:Ավելորդ մանրամասնումը, ավելորդ բառերը, նիշերը սովորողի ուշադրությունը շեղում են հիմնական ընկալումից: Տեքստի տարրերի վատ, դասավորությունը, անխնամ պատկերազարդումը, համընդհանուր ճանաչում չունեցող հապավումների օգտագործումը դժվարեցնում են ինֆորմացիայի ընկալումը: Թեստային առաջադրանքների բովանդակությունը պետք է համապատասխանի սովորած նյութերին, դասագրքին:

Թեստեր մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնական նյութի բովանդակության ընտրության հետևյալ սկզբունքները.

- գիտելիքների առավել կարևոր, հիմնական տարրերի ընտրություն
- գիտական արժանահավատությունը (խորհուրդ չի տրվում թեստի մեջ մտցնել վիճելի տեսակետներ)
- բովանդակության լրիվությունը և ստուգման համար բավարար լինելը
- թեստի բովանդակության փոփոխման հնարավորությունը կապված ուսումնական առարկայի բովանդակության փոփոխման հետ
- աճող դժվարությունը (թեթև առաջադրանքներից, որոնք ճիշտ կատարում է սովորողների մեծ մասը, մինչև ամենադժվարներըՀայտնի է, որ անհնարին է միևնույն թեստով ճիշտ որոշել տարբեր պատրաստվածության աստիճան ունեցող սովորողների գիտելիքները: Դրա համար էլ հաճախ թեստերը մշակվում են պատրաստվածության միջին մակարդակ ունեցող սովորողների գիտելիքները ստուգելու համար: Թեստ կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ:

մեթոդաբանական խնդիրներ ժամանակը և բովանդակությունը: Յուրաքնչյուր թեստին կից պետք է մշակվեն գնահատման չափանիշներ, որտեղ ներկայացվում են ստուգման կամ ուսումնասիրման համար անհրաժեշտ որակներն ու հարակից պահանջները, որոնք պետք է դրսևորի առաջադրանքները կատարող աշակերտը: Թեստի արդյունքներ ավելի հուսալի են, եթե այն նախատեսվում է ավելի քիչ ուսումնակա

Թեստը պետք է չլինի հուսալի, որը նշանակում է ստուգման և գնահատման հաստատունություն:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Հայտորոշիչ թեստ

Ընթացիկ վիճակի ճիշտ հայտորոշմամբ է պայմանավորված ուսուցման գործընթացի հաջողությունը: Հայտորոշման մեծ է ուսումնական աշխատանքում, եթե որակյալ արդյունք է ակնկալվում: Հայտորոշիչ թեստի ուսումնասիրման նպատակն է կրթության ոլորտում պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում աշակերտի կամ ուսուցչի ձեռք բերումները, թերացումները, թերություններն ու սխալները:Աշակերտի թերությունները կարելի է գտնել ճիշտ հայտորոշմամբ և միջոցներ գտնել թերությունները վերացնելու և ընտրել ուսուցման արդյունավետ մեթոդներ:Նոր դասի բացահայտելքց անմիջապես հետո հայտորոշիչի ստուգման ձև կարող է լինել ստուգելով յուրացման աստիճանը:

Հայտորոշիչ թեստը ուսուցանող գնահատման առանձնահատուկ տեսակ է , որով ստուգվում է , թե սովորողը արդյոք պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը:

Հայտորոշիչ թեստերը կարող են լինել ընդհանուր և մասնավոր բնույթի: Ընդհանուր բնույթի թեստերի դեպքում ավելի ընդհանքւր խնդրի բացահայտումն է: Ուսումնական տարեսկզբին հայտորոշման նպատակով տրվում է ծավալուն մուտքային գրավոր աշխատանք: Ընդհանուր բնույթի հայտորոշիչ թեստի նմուշ օրինակ մաթեմատիկա առարկայից:

1.Եթե երկու թվերի արտադրյալը բաժանենք արտադրիչներից որևէ մեկին(որն իհարկե 0 չէ) կստանանք

_____ _____

2.Եթե_____բազմապատկենք քանորդով, կստանանք_____:

3.Գրի՛ր այն թիվը, որը կազմված է 5 տասհազարյակից, 3 հազարավորից և 9 տասնյակից:

_____

4.Գրի՛ր այն թիվը, որը պարունակում է միայն 1_ին կարգում3 կարգային միավոր,6_րդ կարգում՝ 4կարգային միավոր։

_____

5. Նշի՛ր այն վեցանիշ թիվը, որի միավորը 8 է, տասնավորը՝4, հարյուրավորը՝6, իսկ մյուս բոլոր թվանշանները 2։

222468

22486

222648

282462

Ընդգծիր ճիշտ պատասխանը։ Որքանով կփոքրանա 485769 թիվը,եթե նրա գրության վեցերորդ կարգում գրված թվանշանը փոխարինենք 2_ով։

200_ով

2000_ով

20_ով

200000_ով

7. Շրջանագծի՛ր ճիշտ հավասարության համարը։

ա)3 հազ.+5հ.+8տ.=358

բ) 3հազ.+5հ.+8տ.=3580

գ) 3հազ.+5հ.+8տ.=3508

8.Ներկայացրու՛ կարգային գումարելիների գումարի տեսքով։չ

43=

605=

3178=

55184=

9. Ընդգծիր այն թիվը, որը կստացվեր հավասարությունը վերականգնելուց հետո։

5հազ.+3հ +8մ

538, 5308, 583, 5038

10. Կիրառի՛ր բազմապատկման տեղափոխական հատկությունը և հաշվի՛ր արտահայտության արժեքը։

25×178×4=

11. Դիր փակագծեր այնպես, որ ստանաս հավասարություն։

550-200+500-250=600

Կան կարճ ժամանակի համար նախատեսված թեստեր, որոնք ունեն ավելի կոնկրետ և մասնակի խնդիրների վերահանման նպատակ։ Այս թեստերի նպատակն է պարզել որևէ կոնկրետ դասանյութի կամ նոր հաղորդած նյութի փոքր մասի յուրացման աստիճանը։ Նոր նյութի յուրացման աստիճանը ստուգելու համար այս տեստերը կարող են հանձնարարվել։

Դասի հարցադրումների, առաջադրանքների միջոցով մատուցված նյութի յուրացումը ստուգող, ամրապնդող տարբերակներ են, որոնց միջոցով ուսուցիչը, աշակերտի աշխատանքը տեղում ուղորդելով, կարող է գտնել նրա թերացումները, որոնք կարող են լինել մատուցված նյութի վատ յուրացման կամ որոշակի հմտությունների և կարողությունների ցածր մակարդակի։ Կարճ ժամանակի համար նախատեսվող թեստերն ավելի ճկուն են։ Նման թեստերում առաջադրանքները հիմնականում լինում են հետևյալ տեսակների՝

ա)ընտրովի պատասխանով

բ) կարճ պատասխանով

գ) համապատասխանեցման

դ)բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ

Կարճ ժամանակի համար տրվող հայտորոշիչ թեստի նմուշ օրինակ մաթեմատիկա առարկայից։

Թեման: Բազմանիշ թվերի գումարումն ու հանումը։

4–րդ դասարան

1 .Գրի՛ր սյունակով և հաշվի՛ր։

342+146

43372228

74845118

94187048

2.Հաշվի՛ր արտահայտության արժեքը։

(800500):50

(240:4)+100

3. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը։

Ճամբար մեկնեցին120 երեխա։ Նրանցից 58ը աղջիկներ էին։ Որքան էին տղաները։

1)50 2)62 3)68

4.Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը։

Ուղղանկյան կողմերի երկարություններն են 15սմ, 20սմ Հաշվի՛ր այդ ուղղանկյան մակերեսը։

- 50սմ^2
- 60սմ^2
- 70սմ^2

Հայտորոշիչ թեստերը մայրենի առարկայից կազմված են 3 մասից։ Թեստորում առաջադրանքների հաջորդական համարակալումը աշակերտին հնարավորություն է տալիս չսահմանափակվելու որոշակի մասում ներկայացված առաջադրանքների շրջանակում, այլ փորձել բոլոր հարցերին իր հնարավորությունների սահմանում պատասխանելու նպատակադրումով։

Թեստերի առաջին հարցերը կարդացածի բովանդակության ընկալման և լեզվական գիտելիքներ դրսևորելու կարողուէյուններ են, որը վերաբերվում է չափորոշչային պահանջների առաջին մակարդակին։ Երկրորդ մասում մի փոքր բարդ են և պահանջում ոն գործնականում կիրառել ստացած լեզվական գիտելիքները։ Երրորդ մասում առաջադրանքները ստեղծագործական բնույթի են, մի քանի նախադասությամբ կապակցված խոսքի կազմու Աշակերտը ինքն է ընտրում առաջադրանքները։ Դրանով տեղեկացվում է, թե աշակերտը որ բնույթի աշխատանքներն է ավելի նախընտրում և որ հարցերն են ավելի դժվարություն ներկայացնում։ Ուսուցիչը ճիշտ հայտորոշելու դեպքում հնարավորություն է

ստանում յուրաքանչյուր աշակերտի հետ անհատական աշխատանք վարել, որն էլ ավելի է հեշտացնում կարճ ժամանակահատվածում հաղթահարելու ուսման մեջ հանդիպող ամեն մի դժվարություն։

Հայտորոշիչ թեստ: Մայրենի 4-րդ դասարան 20 միավոր

- **Արտագրիր՝ լրացնելով բաց թողած տառերը:** **(5միավոր)**

Անտառում ապրում է մի Մատնաչափիկ՝ արծաթե հանդեր_ներով, միթևանի: Թիթեռնիկները նրան իրենց թա_ուհին են համարում, բայց նա ո՛չ թա_ ունի, ո՛չ գահ, ո՛չ տուն ունի, ո՛չ քուն: Որտեղ խայտաբղե_ թիթեռնիկի տնքոց – հառաչանք է լսվում, այնտեղ հայտնվում է Մատնչափիկը:

- Ի՞նչ է պատահել... Թև՞դ ես վնասել... Տու՛ր թևդ:- բուժում է վնասված թևը և առո_ջացնում:

Բավական է թիթեռնիկի հառաչանք հասնի նրան, իսկույն հայտնվում է նրա կո_քին աչքում աղամանդի պես շողշողացող արցունք, որով էլ հենց բուժում է վերքերը:

_____

_____

_____

2.Տեքստից դու՛րս գրիր 1- ական պարզ, ածանցավոր և բարդ բառ (2միավոր)

Պարզ	Ածանցավոր	Բարդ

3. Տեքստում գտի՛ր և գրի՛ր տրված բառերի հոմանիշները:

(3 միավոր)

Հազուստ - _____

Միանգամից - _____

Գույնզգույն - _____

4.Գծով միացրո՛ւ առաջին և երկրորդ սյունակների արմատներն այնպես, որ ստացվեն բարդ բառեր, և գրի՛ր: **(3 միավոր)**

գործ ընկեր _____

մեղմ որակ _____

լավ օրոր _____

5.Գրի՛ր մեկ բառով: (4 միավոր)

հինգ թև ունեցող – _____

երեք գլուխ ունեցող – _____

թույլ տալ – _____

հինգ նշից կազմված - _____

2-րդ մաս

Գրի՛ր պատասխանը:

- **Վերնագրի՛ր տեքստը:**

  _____

- **Արտագրի՛ր նախադասությունները ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան հականիշներով:**

Լեռան գագաթին մի <u>գեղեցիկ</u> տնակ կար:

_____

Առավոտյան <u>վախկոտ</u> զինվորները <u>նահանջեցին:</u>

_____

- **Տեքստից դո՛ւրս գրիր ինչպիսին էր լորենին: Գրի՛ր այդ բառի հոմանիշները (նվազագույնը՝ 2)**

_____

3 - րդ մաս

Շարադրի՛ր պատասխանը:

- **Ավարտի՛ր նախադասությունը:**

Մեղրից օգտվելն ավելի հարմար եղավ, երբ _____

_____

3.Հորինի՛ր և 4-5 նախադասությամբ գրիր ինչ արեց արջուկը, երբ որսորդները հեռացան:

_____

_____

Գրավոր կամ բանավոր արժևորման ժամանակ կարևորվում են ուսուցչի հետևությունները, մեկնաբանությունները, քանի որ հայտորոշիչ թեստը տրվում է աշակերտին հետադարձ կապի հաստատման նպատակով:

Յուրաքանչյուր աշակերտի աշխատանքը վերլուծելիս պետք է ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը:

Վերլուծումներն ու մեկնաբանություններն պետք է օգնեն աշակերտին բարելավելու իր արդյունքները:

Արդյունքների հեշտ և ակնառու վերլուծությունների ու մեկնաբանությունների նպատակով հայտորոշիչ թեստը ստուգելիս կարելի է օգտագործել միավորային գնահատականներ:

Հայտորոշիչ թեստի օրինակ՝ <<Ես և շրջակա աշխարհը 4>>

Թեմա <<Զարմանահրաշ ջուրը>>

1 .Նշի՛ր ջրի հատկությունները./4 միավոր /

- Անհամ
- Գունեղ
- Անհոտ
- Զուլալ
- Վճիտ
- Թափանցիկ
- Լուծիչ
- **Առանձնացրու ջրի ագրեգատային վիճակները./3 միավոր /**
- Պինդ
- Թափանցիկ
- Անհոտ

- Հեղուկ
- Լուծիչ
- Գազային

2.Ո՞ր երևույթներն են նկարագրում ջրի պինդ վիճակը ./3 միավոր /

- Սառույց
- Մառախուղ
- Անձրև
- Կարկուտ
- Գոլորշի
- Ձյուն

Տվյալների մշակում և վերլուծություն

Տվյալ հարցում ընդգրկված ճիշտ պատասխանների քանակից է սահմանվում միավորները։

Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններն են.

1.Նախատեսված է կարճ ժամանակի համար

2.ստուգվում է մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն

3. հանձնարարված բոլոր առաջադրանքները վերաբերվում են նույն կարողության և հմտության ստուգմանը

4. տվյալ թեմայի ուսուցման նպատակից են բխում առաջադրանքների տեսակները

5. կարճ, պարզ և մատչելի են ձևակերպված հարցերը

6. առաջադրանքների բարդության աստիճանը այնպիսին է, որ սովորողների մեծ մասի կողմից այն հաղթահարելի է

7. 10 -15 րոպե է տրվում թեստի տևողությանը

8.արագ ստուգվում և արժևորվում են արդյունքները

9. աշակերտի հետ հետագա անելիքները կարող ենք որոշել վերլուծելով արդդունքները։

ԱՄՓՈՓՈՒՄ

Որպես հիմնական և օբյեկտիվ չափանիշ օգտագործում ենք թեստերը ուսումնառության պարտադիր մակարդակը վերահսկելու և ստուգելու համար։

Թեստը անգլերեն բառ է, որը նշանակում է փորձարկում, փորձ, հետազոտություն։Այն առաջադրանքների համախումբ է, որի արդյունքով որոշվում է աշակերտի գիտելիքները, հմտությունները և կարողությունները։ Թեստը համեմատելով ավանդական ստուգման տեսակներին, պարզվում է, որ այն ունի մի շարք առավելություններ.

- ավելի օբյեկտիվ է
- գնահատականը ավելի տարբերակված է

3. ընդգրկում է ավելի մեծ ծավալով ծրագրային նյութ

4. թեստը համարվում է ստուգման ավարտական փուլ

Յուրաքանչյուր աշակերտի առաջընթացի կամ դժվարությունների հարցում կիրառելով ուսուցանող և միավորային գնահատման թեստեր, եկել եմ այն եզրակացության, որ թեստերը օգնում են մշտական հետևողություն դրսևորել։ Ժամանակին կարողանում եմ շտկողական աշխատանքներ անել։Թեստերի կիրառումը հնարավորություն է տալիս.

1.Յուրաքանչյուր սովորողի հետ տարվող աշխատանքների բովանդակությունն ու ծավալը ճշտվում է, խթանում է նրա ուսումնական ակտիվությունը

2.հայտորոշելու ուսուցման ընթացքն ու արդյունքները

3.կապ է հաստատում ուսուցումն ուսումնառության հետ

4.փոխադարձ կապ է հաստատում սովորողի և նրա ծնողի հետ

5.ուսումնական գործընթացի և արդյունքների վերահսկում

6. արագ ստուգելու և արժևորելու աշխատանքների արդյունքները

Այսպիսով, թեստերի կիրառումը բարձրացնում է գիտելիքբերի գնահատման գործընթացի արդյունավետությունը, բացահայտում է բացթողումները և խրախուսում ուսուցումը, ինչպես նաև ապահովում ուսուցման որակի հետ հետադարձ կապը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ Ն ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ (ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ և ՀԵԱԱԶՈԱԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ) ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մայրենի

Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, Զանգակե հրատարակչություն, 2014 թ.

Կ. Թորոսյան, Մ. Բալայան, Կ. Չիբուխչյան, Մայրենիի դասերի պլանավորումը, Զանգակե հրատարակչություն, 2016թ.

Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, Սոաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, Զանգակե հրատարակչություն, Երևան, 2011թ.

Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Զանգակ հրատարակչություն, 2013թ.

Մաթեմատիկա

- Ս. Սարգսյան, Հետաքրքրաշարժ առաջադրանքներ մաթեմատիկայից: Երևան, .Արևիկ հրատարակչություն, 2012
- Ս. Սարգսյան, Յուրօրինակ առաջադրանքներ մաթեմատիկայից: Երևան, .Զանգակ հրատարակչություն, 2013:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան

- Ես և շրջակա աշխարհը ուսումնական առարկայի չափորոշիչն ծրագիր (1-4-րդ դասարաններ)

- Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Զանգակե հրատարակչություն, 2013թ.

Մանկավարժություն

Կ.Թորոսյանն, Կ. Չիրուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Զանգակե հրատարակչություն, 2013թ.Կ.

Գնահատում

- Օնիկ Միքայելյան, Սոնա Միքայելյան: Թեստ. Կառուցման և արդյունքների վերլուծության հիմունքների ձեռնարկ: Երևան 2015, .Զանգակ հրատարակչություն:
- Սիրամարգ Վարդումյան, Նինա Ջաղինյան, Լիլիթ Հարությունյան, Գարի Վարելլա: .ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատման ձեռնարկ: Երևան 2005, .Նոյան Տապան հրատարակչություն:

Բովանդակություն

Նախաբան. 2-3

Հոտազոտական համատեքստ. 4-5

Գործնական համատեքստ. 6-7

Հետազոտական ընթացք. 8-14

Տվյալների մշակում և վերլուծություն. 15

Ամփոփում. 16

Օգտագործվաց գրականության ցանկ. 17-18